

Հարց Ե՞րբ չի ընդունվում ուսումնասիրության՝ ջրային ոլորտում գործունեության լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտը:

Պատասխան Հայտը չի ընդունվում ուսումնասիրության, եթե՝

ա) նրանում ընդգրկված փաստաթղթերը չեն համապատասխանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և «Ջրային ոլորտում գործունեության լիցենզավորման տրամադրման կարգը հաստատելու մասին» կարգով սահմանված պահանջներին,

բ) ներկայացված փաստաթղթերում առկա են անճշտություններ և անհամապատասխանություններ,

գ) Հայտատուն, օրենքի կամ իր կանոնադրության համաձայն, իրավունք չունի զբաղվելու հայցվող լիցենզիայով նախատեսված գործունեության տեսակով: